ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՐԱԾՔԱՅԻՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԵՎ ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

ՄԵԹՈԴԱԿԱՆ ՈՒՂԵՑՈՒՅՑ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՅՆՔՆԵՐԻ ՏԵՂԱԿԱՆ ԻՆՔՆԱԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՄԱՐՄԻՆՆԵՐԻ՝ «ԲՆԱԿԱՎԱՅՐԵՐԻ ՀԱՄԱՐ ԿԼԻՄԱՅԻ ՓՈՓՈԽՈՒԹՅԱՆ ԵՎ ՀԱՐՄԱՐՎՈՂԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՄՇԱԿՄԱՆ»
ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Երևան-2022թ.

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

1. Ընդհանուր դրույթներ մեթոդական ուղեցույցի և դրա կիրառության վերաբերյալ….3
2. Կլիմայի փոփոխության և դրանով պայմանավորված ռիսկերի նկարագրություն/սահմանում ……..4
3. Համայնքի ռազմավարական փաստաթղթերում կլիմայի փոփոխության հարմարվողականությանը միտված գործողությունների և միջոցառումների սահմանում ……5
4. Ըստ հիմնական ոլորտների և ըստ կլիմայական վտանգի տեսակների՝ տեղական ինքնակառավարման մարմինների համար մեթոդական ցուցումներ……..…..…7
5. Բնակավայրերի մակարդակում աղետների ռիսկերի և դրանց հետևանքով առաջացած խոցելիության նվազեցմանը միտված միջոցառումների պլանավորման մեթոդական ցուցումներ……10

1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ ՄԵԹՈԴԱԿԱՆ ՈՒՂԵՑՈՒՅՑԻ ԵՎ ԴՐԱ ԿԻՐԱՌՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

«Բնակավայրերի համար կլիմայի փոփոխության հարմարվողականության ծրագրերի մշակման» մեթոդական ուղեցույցը (այսուհետ՝ Ուղեցույց) մշակվել է հիմք ընդունելով «Կլիմայի փոփոխության հարմարվողականության ազգային գործողությունների ծրագիրը և 2021-2025 թվականների միջոցառումների ցանկը հաստատելու մասին» ՀՀ կառավարության 2021 թվականի մայիսի 13-ի N 749-Լ որոշման հավելվածի 9-րդ գլխի 2.2-րդ ենթակետով սահմանված միջոցառման վերաբերյալ կարգավորումը:

Ուղեցույցը մշակվել է ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 97-րդ և 98-րդ հոդվածներով սահմանված պահանջներով: Ուղեցույցը նպատակ ունի ապահովելու համայնքների տեղական ինքնակառավարման մարմիններին մեթոդական աջակցությամբ՝ բնակավայրերում կլիմայի փոփոխության հարմարվողականության միջոցառումների պլանավորման և իրականացման համար: Ուղեցույցը մշակվել է ՀՀ ներպետական օրենսդրությամբ տեղական ինքնակառավարման մարմիններին վերապահված լիազորությունների համատեքստում, որոնք թղթակցվում են կամ կարգավորում են կլիմայի փոփոխության և հարմարվողականության բաղադրիչներից ենթադրվող իրավահարաբերությունների հետ:

Ուղեցույցը և դրանով նկարագրված մեթոդական ցուցումները առավելապես հիմնված են Կլիմայի փոփոխության հարմարվողականության բաղադրիչներից բխող՝ տեղական ինքնակառավարման մարմինների լիազորությունների վրա, ինչն միտված է ապահովելու Ուղեցույցում ներառել բացառապես այնպիսի մեթոդական ցուցումներ և կարգավորումներ, որոնք իրենց բնույթով և էությամբ համապատասխանում են ՀՀ Սահմանադրության 6-րդ հոդվածով և 182-րդ հոդվածի 5-րդ մասով սահմանված կարգավորումներին, այն է՝ «տեղական ինքնակառավարման մարմիններն ու պաշտոնատար անձինք իրավասու են կատարելու միայն այնպիսի գործողություններ, որոնց համար լիազորված են Սահմանադրությամբ կամ օրենքներով:»:

Ուղեցույցում սահմանված են հստակ մեթոդական բնույթի ցուցումներ, որոնք վերաբերելի են համայնքում և դրա կազմում ընդգրկված բնակավայրերում կլիմայական վտանգների հանդեպ հարմարվողականության կարողությունների

զարգացմանը, խոցելիության նվազեցմանը, հարմարվողականության միջոցառումների կազմակերպմանը և իրականացմանը, համապատասխան ենթակառուցվածքների բարլավմանը կամ նոր ենթակառուցվածքների ձևավորմանը, համայնքային ռազմավարական փաստաթղթերում կլիմայի փոփոխության հարմարվողականության միջոցառումների ինտեգրմանը՝ համայնքի հնգամյա զարգացման ծրագրում, համայնքի տարեկան աշխատանքային պլանում և համայնքի տարեկան բյուջեում կլիմայի փոփոխության և հարմարվողականության ուղղություններով միջոցառումների պլանավորմանը (նախատեսմանը) և իրագործմանը:

Ուղեցույցում սահմանված են կարգավորումներ և ցուցումներ, որոնք գտնվում են համայնքների տեղական ինքնակառավարման մարմինների լիազորությունների շրջանակում և միտված են լուծելու օրենքով սահմանված համայնքի պարտադիր խնդիրները[1], այդ ոլորտներն են.

- ⇒ Տրանսպորտ և տրանսպորտային ենթակառուցվածքներ.
- ⇒ Ջրային ռեսուրսների կառավարում.
- ⇒ Գյուղատնտեսություն (անասնաբուծություն և բուսասանիտարիա, բնական կերհանդակների կայուն կառավարում).
- ⇒ Շրջակա միջավայր և կենսաբազմազանություն.
- ⇒ Հողօգտագործման պլանավորում.
- ⇒ Քաղաքացիական պաշտպանություն և աղետների ռիսկերի նվազեցում.
- ⇒ Առողջապահություն.
- ⇒ Զբոսաշրջություն և այլն:

Ուղեցույցի մշակման ընթացքում հաշվի են առնվել կլիմայի փոփոխության և կլիմայական վտանգի տեսակները, կլիմայական ռիսկերը՝ ջերմային ալիքներ, երաշտներ, վտանգավոր և ինտենսիվ կարկուտ, վաղ ցրտահարություն, հորդառատ անձրև, ուժեղ քամի, սառնամանիք, սողանքներ, սելավներ, սեզոնային ջրհեղեղներ, անտառային հրդեհներ, քարաթափումներ, ձնահյուսեր, ձնակուտակումներ և այլն:

Վերը մեջբերված կլիմայական ռիսկերի համատեքստում՝ Ուղեցույցում արվել են համապատասխան առաջարկություններ, որոնք որպես մեթոդական ցուցումներ

[1] **Ծանոթություն:** Համայնքի պարտադիր խնդիրները բխում են ՀՀ Սահմանադրության 86-րդ հոդվածից և սահմանված են «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 12-րդ հոդվածով: Համայնքի տեղական ինքնակառավարման մարմիններին վերապահված բոլոր սեփական լիազորությունները միտված են լուծելու համայնքի պարտադիր խնդիրները:

ուղղված են լինելու համայնքների տեղական ինքնակառավարման մարմիններին, համայնքապետարանների աշխատակազմերի համապատասխան ստորաբաժանումներին, ինչպես նաև խոշորացված բազմաբնակավայր համայնքների կազմում ընդգրկված բնակավայրերի վարչական ղեկավարներին:

Ուղեցույցը համապատասխանում է տեղական ինքնակառավարման բնագավառի պետական լիազոր մարմնի կողմից՝ մեթոդական ցուցումների մասով ընդունելի չափորոշիչներին, որի արդյունքում այն ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության կողմից ստացել է մեթոդական ցուցման կարգավիճակ, և ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 97-րդ և 98-րդ հոդվածների հիմքով՝ տրամադրվում է համայնքների տեղական ինքնակառավարման մարմիններին՝ ի ղեկավարումն:

2. ԿԼԻՄԱՅԻ ՓՈՓՈԽՈՒԹՅԱՆ ԵՎ ԴՐԱՆՈՎ ՊԱՅՄԱՆԱՎՈՐՎԱԾ ՌԻՍԿԵՐԻ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆ/ՍԱՀՄԱՆՈՒՄ

Կլիմայի փոփոխության բնական գործոններ են հանդիսանում ավելի մեծ հաճախականությամբ կրկնվող հիդրոօդերևութաբանական այնպիսի երևույթներ, ինչպիսիք են երաշտները և խորշակները, փոթորիկներն ու կարկտահարությունը, ցրտահարությունները: Մեծ վտանգ են պարունակում երկրորդական արտածին (էկզոգեն) երևույթները՝ էրոզիան, սողանքներն ու սելավները, ջրածածկումներն ու հեղեղները, հողի բնական աղակալումը: Կազմելով գործոնների ինքնուրույն խումբ՝ այդ

երևույթները կարող են վնասազերծվել մարդու նպատակային գործունեության արդյունքում, թեև դրա համար պահանջվում են մեծածավալ կապիտալ ներդրումներ[2]:

Սույն բաժնում ներկայացվում են կլիմայի փոփոխության և դրանով պայմանավորված ռիսկերի՝ ջերմային ալիքների, երաշտների, կարկուտի, ցրտահարության, հորդառատ անձրևի, ուժեղ քամու, սառնամանիքի, սողանքների, սելավների, հեղեղումների, անտառային հրդեհների, քարաթափումների, ձնահյուսերի և ձնակուտակումների հասկացությունները և հակիրճ սահմանումները և նկարագրությունները[3]:

- **Ջերմային ալիք** – տարածքի սովորական եղանակի և սեզոնի նորմալ ջերմաստիճանի համեմատ չափազանց տաք եղանակի ժամանակաշրջան, որը կարող է ուղեկցվել բարձր խոնավությամբ:
- **Երաշտ** – մի քանի օրվա կամ շաբաթվա ընթացքում օդի միջին դրական ջերմաստիճանի 100C-ով և ավելի բարձրացում:
- **Ծայրահեղ տաք** – ամառային ջերմաստիճան, որը միջինից շատ ավելի տաք է և/կամ խոնավ:
- **Կարկուտ** – պինդ տեղումների ձև, սառեցրած արձրևաջրերի գնդիկներ, որոնք ընկնում են ամպերից:
- **Ծայրահեղ ցուրտ**– երկար ժամանակով սպասվող վտանգավոր և պոտենցիալ կյանքին սպառնացող ջերմաստիճան:
- **Ծայրահեղ տեղումներ** – միջինից զգալիորեն գերազանցող հորդառատ անձրևների կամ ձյան քանակը:
- **Սառնամանիք** – սեզոնի նորմալ ջերմաստիճանի համեմատ չափազանց ցուրտ եղանակի ժամանակաշրջան:
- **Ձնահյուս/ձնահոսք** – ձյան զանգված, որը սահում կամ ցած է թափվում լեռների լանջերից և որի ծավալը կարող է հասնել մի քանի միլիոն խորանարդ մետրի:

[2] Տե՛ս ՀՀ կառավարության 2017 թ. ապրիլի 13-ի նիստի N 15 արձանագրային որոշման հավելվածի 7-րդ կետ:

[3] Հասկացությունները և նկարագրությունները սահմանվել են հիմք ընդունելով Քաղաքապետերի դաշնագիր՝ Արևելք ծրագրի ստորագրողների համար նախատեսված «Կլիմայի փոփոխության ռիսկի և խոցելիության գնահատման» վերաբերյալ հարցաշարում ներկայացված սահմանումները:

- **Ձնակուտակում**– ձյան առատ տեղումների պայմաններում ձյան կուտակում տարբեր բնական կամ արհեստական խոչընդոտների վայրում:
- **Քարաթափում** – ֆիզիկական, քիմիական և կենսաբանական քայքայման, երկրաշարժերի կամ մակերևութային ջրերի զարգացման հետևանքով ժայռոտ զանգվածների վրա ձևավորված քարերի, քարաբեկորների՝ ծանրության ուժի ներգործությամբ, լանջերի ստորոտներ թափվելը:
- **Սողանք** – ծանրության ուժի ազդեցության տակ լեռնային ապարների և հողային զանգվածների սողալով տեղափոխման, իջնելու գործընթաց:
- **Փոթորիկ/ուժեղ քամի** – մթնոլորտային խանգարումներ, որոնք կարող են դրսևորվել ուժեղ քամիների միջոցով և ուղեկցվել անձրևի, ձյան կամ այլ տեղումների, ինչպես նաև ամպրոպի և կայծակի միջոցով:
- **Էրոզիա** – հողի մակերևույթի, հոզի կամ լեռնային ապարների հեղեղում մակերևութային ջրերի, քամու կամ այլ ֆիզիկա-քիմիական գործընթացների ներգործությամբ:
- **Սելավ** – ջրի և մեծ քանակությամբ լեռնային ապարների խախտման հետևանքով առաջացած նյութի ժամանակավոր հոսք, որն անսպասելիորեն առաջանում է լեռնային գետերի հուներում:

3. ՀԱՄԱՅՆՔԻ ՌԱԶՄԱՎԱՐԱԿԱՆ ՓԱՍՏԱԹՂԹԵՐՈՒՄ ԿԼԻՄԱՅԻ ՓՈՓՈԽՈՒԹՅԱՆ ՀԱՐՄԱՐՎՈՂԱԿԱՆՈՒԹՅԱՆԸ ՄԻՏՎԱԾ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԵՎ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ՍԱՀՄԱՆՈՒՄ

Համայնքների տեղական ինքնակառավարման մարմիններին՝ առաջարկվում է, համայնքի հնգամյա զարգացման ծրագրի, համայնքի տարեկան աշխատանքային պլանի և համայնքի տարեկան բյուջեի նախագծերը մշակելիս, հաշվի առնել դրանցում կլիմայի փոփոխության հարմարվողականությանը միտված գործողություններ և միջոցառումներ նախանշելու և սահմանելու անհրաժեշտությունը:

Բազմաբնակավայր համայնքների տեղական ինքնակառավարման մարմիններին և համայնքապետարանների աշխատակազմերին, առաջարկվում է ընդունել ի գիտություն հետևյալը. բոլոր այն դեպքերում, երբ համապատասխանաբար ավագանու

կողմից հաստատվել են համայնքի հնգամյա զարգացման ծրագիրը, համայնքի տարեկան աշխատանքային պլանը և համայնքի տարեկան բյուջեն՝ ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի համապատասխան իրավակարգավորումներով, հնարավոր է ավագանու արտահերթ կամ հերթական նիստի օրակարգում ներառել կլիմայի փոփոխության հարմարվողականության վերաբերյալ ծրագրրերի, միջոցառումների կազմակերպման և իրականացման վերաբերյալ կառուցակարգերը:

Առաջին հերթին՝ առաջարկվում է կլիմայի փոփոխության հարմարվողականությանը միտված միջոցառումների կամ գործողությունների իրականացման վերաբերյալ կարգորոշումները սահմանել համայնքի հնգամյա զարգացման ծրագրում, ներառելով դրա նախագծում կամ նախաձեռնելով համայնքի հնգամյա զարգացման ծրագրում փոփոխություններ և լրացումներ կատարելու գործընթաց:

Համայնքների տեղական ինքնակառավարման մարմիններին առաջարկվում է ընդունել ի գիտություն հետևյալը. համայնքի հնգամյա զարգացման ծրագիրը համայնքի սոցիալ-տնտեսական իրավիճակի վերլուծության և *առկա հիմնախնդիրների բացահայտման*, ֆինանսական, տնտեսական, *բնական* և մարդկային ռեսուրսների գնահատման արդյունքում նպատակային զարգացման տեսանկյունից ձեռնարկվելիք քայլերի ամբողջությունն արտահայտող փաստաթուղթ է, որը նախատեսում է ռազմավարական կտրվածքով համայնքի *հիմնախնդիրների արդյունավետ լուծումը*[4]:

Համայնքի հնգամյա զարգացման ծրագրի հասկացության օրենսդրական սահմանումից ենթադրվում է, որ դրանում միանգամայն կարող են ներառվել համայնքում առկա՝ կլիմայի փոփոխության և դրանով պայմանավորված ռիսկերի նվազեցմանը և հարմարվողականությանը միտված միջոցառումներ կամ գործողություններ:

Կլիմայի փոփոխության հարմարվողականությանը միտված գործողությունները և միջոցառումները համայնքի հնգամյա զարգացման ծրագրում ներառելու նպատակով, առաջարկվում է համայնքների ղեկավարներին, համայնքապետարանի աշխատակազմի համապատասխան ստորաբաժանումների կամ դրանց

[4] «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 82-րդ հոդվածի 1-ին մաս:

բացակայության դեպքում՝ համապատասխան համայնքային ծառայողների միջոցով մշակել համայնքի հնգամյա զարգացման ծրագրում փոփոխություն և լրացում կատարելու մասին համայնքի ավագանու որոշման նախագիծ, ինչպես նաև դրա ընդունման անհրաժեշտության վերաբերյալ հիմնավորում:

Համայնքի հնգամյա զարգացման ծրագրում փոփոխություն և լրացում կատարելու մասին համայնքի ավագանու որոշման նախագծում անհրաժեշտ է սահմանել նկարագրական բաղադրիչ կոնկրետ տվյալ համայնքի առանձնահատկություններից ելնելով, նախանշելով այդ համայնքում առկա կամ հնարավոր կլիմայի փոփոխության և դրանով պայմանավորված ռիսկերը:

Անհրաժեշտ է ընդունել ի գիտություն, որ համայնքի հնգամյա զարգացման ծրագրի նախագծում պետք է ներառել կլիմայի փոփոխության հարմարվողականությանը միտված այնպիսի միջոցառումներ կամ գործողություններ, որոնց իրականացման համար, համայնքը ունի համապատասխան բյուջետային հնարավորություններ:

Մեջբերված ցուցումը պայմանավորված է այն հանգամանքով, որ համայնքի հնգամյա զարգացման ծրագրում ներառվելիք ծրագրերի իրագործման մասով տեղական ինքնակառավարման ոլորտը կարգավորող ներպետական օրենսդրությունը սահմանել է հաշվետվողականության և կատարողականի հաստատման վերաբերյալ դրույթներ, ինչից հետևում է՝ որ համայնքի հնգամյա զարգացման ծրագրում ներառված ծրագրային գործողությունը պետք է անմիջականորեն փոխկապակցված լինի համայնքի տարեկան աշխատանքային պլանի հետ, և որ ամենակարևորն է՝ համայնքի տարեկան բյուջեի հետ:

Ելնելով տվյալ համայնքի առանձնահատկություններից, առաջարկվում է բազմաբնակավայր համայնքների տեղական ինքնակառավարման մարմիններին և համայնքապետարանների աշխատակազմերին՝ համայնքի հնգամյա զարգացման ծրագրում ներառել կլիմայի փոփոխության հարմարվողականությանը միտված այնպիսի գործողություններ և միջոցառումներ, որոնք վերաբերելի են կլիմայի փոփոխության և դրանով պայմանավորված հետևյալ ռիսկերին՝ ջերմային ալիքների, երաշտների, կարկուտի, ցրտահարության, հորդառատ անձրևի, ուժեղ քամու,

սառնամանիքի, սողանքների, սելավների, հեղեղումների, անտառային հրդեհների, քարաթափումների, ձնահյուսերի, ձնակուտակումների և այլն:

Համայնքների տեղական ինքնակառավարման մարմիններին, առաջարկվում է ընդունել ի գիտություն՝ տվյալ համայնքում առկա կամ հնարավոր կլիմայի փոփոխության և դրանով պայմանավորված ռիսկերը նախանշելիս պետք է նախևառաջ գնահատել դրանցից որևէ մեկի մասով ծրագրային գործողություն կատարելու առաջնահերթությունը, այսինքն՝ համայնքի ունեցած ֆինանսական հնարավորությունների շրջանակներում դիտարկել ռիսկերի նվազեցմանը միտված այն գործողությունները, որոնք ենթադրում են առավել հասցեականություն և առաջնահերթ են տվյալ համայնքի կայուն կենսագործման համար:

Վերը նկարագրված առաջնահերթությունը որոշելուց հետո, առաջարկվում է համայնքների ղեկավարներին, հանձնարարել համայնքապետարանի աշխատակազմի համապատասխան կառուցվածքային ստորաբաժանումներին՝ համագործակցելով աշխատակազմի ֆինանսատնտեսագիտական ստորաբաժանման հետ, մշակել համայնքի հնգամյա զարգացման ծրագրում՝ կլիմայի փոփոխության հարմարվողականությանը միտված գործողություններ և միջոցառումներ ներառելու նպատակով, փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին համայնքի ավագանու որոշման նախագիծ:

Անհրաժեշտ է ընդունել ի ղեկավարումն, որ կլիմայի փոփոխության հարմարվողականությանը միտված գործողություններ և միջոցառումներ ներառելու նպատակով, համայնքի հնգամյա զարգացման ծրագրում փոփոխություններ կատարելու մասին համայնքի ավագանու որոշման նախագծիը պետք է ունենա ընդունման անհրաժեշտության վերաբերյալ հիմնավորում, որում մանրամասն անհրաժեշտ է նկարագրել, տվյալ համայնքում, կոնկրետ կլիմայի փոփոխության և դրանով պայմանավորված ռիսկի մասով ընթացիկ իրավիճակը, առաջարկվող լուծումները և ակնկալվող արդյունքը:

Համայնքի հնգամյա զարգացման ծրագիրը պետք է համահունչ լինի Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի և կառավարության հավանությանն արժանացած ***մարզային, տարածաշրջանային զարգացման և այլ ռազմավարական ծրագրերին***[5]:

[5] «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 82-րդ հոդվածի 5-րդ մաս:

Վերը մեջբերված օրենսդրական կարգավորումների համատեքստում, առաջարկվում է համայնքների ղեկավարներին, համայնքի հնգամյա զարգացման ծրագրում՝ կլիմայի փոփոխության հարմարվողականությանը միտված ծրագրեր ներառելիս, համագործակցել համապատասխան մարզպետարանի աշխատակազմի հանրապետական գործադիր մարմինների և տեղական ինքնակառավարման վարչության հետ, ինչն հնարավորություն կընձեռի բացահայտելու մարզային մակարդակում նման ծրագրեր ունենալու, ինչպես նաև լինելու պարագայում դրան համահունչ առաջնորդվելու համար:

Բոլոր այն դեպքերում, երբ պարզվելու է, որ մարզային մակարդակում, ռազմավարությունների և զարգացման ծրագրերի շրջանակում կլիմայի փոփոխության հարմարվողականությանը միտված ծրագրեր նախանշված չեն, համայնքների տեղական ինքնակառավարման մարմինները ազատ են ինքնուրույն որոշելու տվյալ համայնքի առաջնահերթ համարվող ռիսկերի շուրջ ծրագրային միջոցառում կամ գործողություն սահմանելը և իրականացնելը:

Անհրաժեշտ է ընդունել ի գիտություն, որ համայնքի պարտադիր խնդիրները բխում են համայնքի կայուն կենսագործման շահերից և սահմանված են «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 12-րդ հոդվածով: Համայնքի տեղական ինքնակառավարման մարմիններին վերապահված բոլոր սեփական լիազորությունները միտված են լուծելու օրենքով սահմանված համայնքի պարտադիր խնդիրները:

Ստորև ներկայացվում են այն հիմնական ոլորտները, որոնք ըստ էության գտնվում են համայնքի պարտադիր խնդիրների տիրույթում և որոնց մասով համայնքի հնգամյա զարգացման ծրագրում, համայնքի տարեկան աշխատանքային պլանում և համայնքի տարեկան բյուջեում կարող են սահմանվել համապատասխան ծրագրային գործողություններ և միջոցառումներ: Այդ ոլորտները կամ ուղղություններն են.

Տրանսպորտ և տրանսպորտային ենթակառուցվածքներ.

⇒ Ջրային ռեսուրսների կառավարում.

⇒ Գյուղատնտեսություն (անասնաբուծություն և բուսասանիտարիա, բնական կերհանդակների կայուն կառավարում).

⇒ Շրջակա միջավայր և կենսաբազմազանություն.

⇒ Հողօգտագործման պլանավորում.

⇒ Քաղաքացիական պաշտպանություն և աղետների ռիսկերի նվազեցում.

⇒ Առողջապահություն.

⇒ Զբոսաշրջություն և այլն:

Հարկ է ընդունել ի ղեկավարումն, որ տեղական ինքնակառավարման մարմինները օրենքով սահմանված կարգով պարտավոր են առաջնահերթությամբ ապահովել համայնքի պարտադիր խնդիրների լուծման նպատակով սահմանված սեփական լիազորությունների կատարումը[6]:

Վերը մեջբերված օրենսդրական իմպերատիվ կարգավորման համատեքստում, արժանահավատ է դիտարկել այն հանգամանքը, որ համայնքի հնգամյա զարգացման ծրագրում ներառվելիք՝ կլիմայի փոփոխության հարմարվողականությանը միտված բոլոր այն գործողությունները և միջոցառումները, որոնք, ելնելով տվյալ համայնքում առկա կլիմայի փոփոխության և դրանով պայմանավորված ռիսկերից, մշակվելու են տրանսպորտի և տրանսպորտային ենթակառուցվածքների, ջրային ռեսուրսների կառավարման, գյուղատնտեսությանն (անասնաբուծություն և բուսասանիտարիա, բնական կերհանդակների կայուն կառավարում), շրջակա միջավայրի պահպանության, հողօգտագործման պլանավորման, քաղաքացիական պաշտպանության և աղետների ռիսկերի նվազեցման, առողջապահության և զբոսաշրջության բնագավառներում, կարող են փաստացի իրականացվել համայնքների տեղական ինքնակառավարման մարմինների կողմից:

Երկրորդ հերթին՝ հիմք ընդունելով համայնքի ավագանու կողմից հաստատված համայնքի հնգամյա զարգացման ծրագրում ներառված ծրագրային դրույթները, անհրաժեշտ է կլիմայի փոփոխության հարմարվողականությանը միտված միջոցառումների կամ գործողությունների իրականացման վերաբերյալ ծրագրային դրույթները սահմանել համայնքի տարեկան աշխատանքային պլանում, ներառելով դրա նախագծում կամ նախաձեռնելով համայնքի տարեկան աշխատանքային պլանում փոփոխություններ և լրացումներ կատարելու գործընթաց:

Առաջարկվում է համայնքների տեղական ինքնակառավարման մարմիններին ընդունել ի գիտություն. Համայնքի տարեկան աշխատանքային պլանը համայնքի ծրագրային այն փաստաթուղթն է, որը սահմանում է *տվյալ տարվա ընթացքում*

[6] «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի 9-րդ մաս:

տեղական ինքնակառավարման մարմինների կողմից կամ նրանց մասնակցությամբ համայնքում իրականացվող ***բոլոր ծրագրերը և միջոցառումները***[7]:

Համայնքի տարեկան աշխատանքային պլանում՝ կլիմայի փոփոխության հարմարվողականությանը միտված գործողություններ և միջոցառումներ ներառելիս, համայնքների տեղական ինքնակառավարման մարմիններին և համայնքապետարանների աշխատակազմերին առաջարկվում է ի ղեկավարումն ընդունել ***ստորև ներկայացված մեթոդական ցուցումները***՝ օրենսդրական կառուցակարգերի տեսքով.

- ✓ Համայնքի տարեկան աշխատանքային պլանը մշակվում և հաստատվում է համայնքի ավագանու կողմից հաստատված հնգամյա զարգացման ծրագրի հիման վրա՝ տվյալ տարվա ընթացքում համայնքի *տնտեսական,* սոցիալական, մշակութային, *բնապահպանական և այլ ծրագրերի ու միջոցառումների պլանավորման,* իրականացման և վերահսկման գործընթացներն առավել նպատակային և արդյունքահենք կազմակերպելու համար:
- ✓ Համայնքի տարեկան աշխատանքային պլանում ընդգրկվում են համայնքում իրականացվող *համայնքի բյուջեից* և ***այլ աղբյուրներից ֆինանսավորվող***, ինչպես նաև ֆինանսավորում չպահանջող բոլոր ծրագրերը, այդ թվում՝ համայնքի ենթակառուցվածքների պահպանման, շահագործման և զարգացման, համայնքային ծառայությունների մատուցման, հիմնական միջոցների կառավարման, մարդկային ռեսուրսների կառավարման, ինչպես նաև միջազգային կազմակերպությունների ներդրումային, քաղաքացիական հասարակության և մասնավոր հատվածի աջակցությամբ և այլ ծրագրեր:
- ✓ Համայնքի ղեկավարը բյուջեի կատարման տարեկան հաշվետվության հետ համայնքի ավագանուն է ներկայացնում հաշվետու տարում համայնքի տարեկան աշխատանքային պլանի իրականացման վերաբերյալ հաշվետվությունը, որը ենթակա է հրապարակման՝ օրենքով սահմանված կարգով:

[7] «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 82.1-ին հոդվածի 1-ին մաս:

Բազմաբնակավայր համայնքների տեղական ինքնակառավարման մարմիններին և համայնքապետարանների աշխատակազմերին, առաջարկվում է ընդունել ի ղեկավարումն՝ համայնքի տարեկան աշխատանքային պլանում կլիմայի փոփոխության հարմարվողականությանը միտված գործողություններ և միջոցառումներ ներառելու նպատակով և առհասարակ, փոփոխություններ կատարելու պարագայում, կիրառել Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության կողմից ընդունելի համարվող՝ բոլոր համայնքների մասով համընդհանուր կիրառելի տարբերակով մշակված՝ համայնքային տարեկան աշխատանքային պլանների կազմման էլեկտրոնային գործիքը, որը տեղական ինքնակառավարման բնագավառի պետական լիազոր մարմնի կողմից վաղօրոք տրամադրվել է համայնքների ղեկավարներին՝ ի ղեկավարումն:

Համայնքների տեղական ինքնակառավարման մարմիններին և համայնքապետարանների աշխատակազմերին, առաջարկվում է, համայնքի տարեկան աշխատանքային պլանում՝ կլիմայի փոփոխության հարմարվողականությանը միտված գործողություններ և միջոցառումներ ներառելիս, առաջնորդվել հետևյալ գործողություններով.

- ⇒ ընտրել օրենքով սահմանված այն բնագավառի (ոլորտի) անվանումը, որին վերաբերում է կլիմայի փոփոխության հարմավողականությանը միտված ծրագրային գործողության՝ ծրագրի իրականացումը.
- ⇒ սահմանել կլիմայի փոփոխության հարմավողականությանը միտված համայնքային ծրագրի անվանումը.
- ⇒ նախանշել և սահմանել կլիմայի փոփոխության հարմավողականությանը միտված համայնքային ծրագրի նպատակները.
- ⇒ սահմանել համայնքի հիմնական միջոցների և գույքի կառավարման տարեկան ծրագրում ներառված հիմնական միջոցի կամ գույքի անվանումը, որի բարելավման կամ արդիականացման նպատակով կազմվում է կլիմայի փոփոխության հարմավողականությանը միտված համայնքային ծրագիրը (եթե ծրագիրը չի նախատեսում նոր հիմնական միջոցի կամ գույքի ստեղծում, ձեռք բերում կամ կառուցում, որը արտացոլվելու է հաջորդ տողում).

⇒ սահմանել համայնքի կազմում ընդգրկված բնակավայրի (երի) անվանումները, որոնք հանդիսանում են տվյալ ծրագրի շահառու.

⇒ նախատեսել կլիմայի փոփոխության հարմավողականությանը միտված համայնքային ծրագրի շահառուների թվաքանակը (շահառու քաղաքացիների և (կամ) կազմակերպությունների թվաքանակը).

⇒ նախանշել թե տվյալ ծրագիրը ինչ ազդեցություն կարող են ունենալ լուծման ենթակա խնդիրները համայնքի սոցիալ-տնտեսական վիճակի վրա.

⇒ սահմանել կլիմայի փոփոխության հարմավողականությանը միտված համայնքային ծրագրի իրականացման դեպքում ակնկալվող արդյունքների ամփոփ նկարագիրը:

Երրորդ հերթին՝ հիմք ընդունելով համայնքի ավագանու կողմից հաստատված համայնքի տարեկան աշխատանքային պլանում ներառված ծրագրային դրույթները, անհրաժեշտ է կլիմայի փոփոխության հարմարվողականությանը միտված միջոցառումների կամ գործողությունների իրականացման համար ֆինանսավորման վերաբերյալ գործիքակազմերը սահմանել համայնքի տարեկան բյուջեում, ներառելով դրա նախագծում կամ նախաձեռնելով համայնքի տարեկան բյուջեում փոփոխություններ և լրացումներ կատարելու գործընթաց:

Համայնքի ռազմավարական փաստաթղթերում կլիմայի փոփոխության հարմարվողականությանը միտված ծրագրային պլանավորումներ և դրանցից բխող գործողություններ նախաձեռնելիս, հարկ է առաջնորդվել ստորև բերված աղյուսակով, որով ներկայացվում է համայնքի ղեկավարի լիազորությունների բնագավառների և համայնքի տարեկան բյուջեի՝ ըստ գործառական դասակարգման ծախսերի բաժինների համապատասխանությունը[8].

[8] **Ծանոթություն:** Աղյուսակում ներկայացված է համայնքի ղեկավարի լիազորությունների այն բնագավառների և համայնքի բյուջեի՝ ըստ գործառական դասակարգման ծախսերի բաժինների համապատասխանությունը, որոնք կարող են դիտարկվել որպես կլիմայի փոփոխության հարմարվողականության ոլորտներ:

Աղյուսակ: Համայնքի ղեկավարի լիազորությունների բնագավառների և համայնքի տարեկան բյուջեի՝ ըստ գործառական դասակարգման ծախսերի բաժինների համապատասխանության վերաբերյալ[9].

NN	Համայնքի ղեկավարի լիազորությունների բնագավառը	Համայնքի բյուջեի ըստ գործառական դասակարգման ծախսերի բաժինները
1.	Արտակարգ իրավիճակներից բնակչության պաշտպանություն և քաղաքացիական պաշտպանության կազմակերպում	Պաշտպանություն
2.	Քաղաքաշինություն և կոմունալ տնտեսություն	• Տնտեսական հարաբերություններ. Շինարարություն, Տնտեսական հարաբերությունների գծով հետազոտական և նախագծային աշխատանքներ, Տնտեսական հարաբերություններ (այլ դասերին չպատկանող), • Շրջակա միջավայրի պաշտպանություն • Բնակարանային շինարարություն և կոմունալ ծառայություն
3.	Հողօգտագործում	• Տնտեսական հարաբերություններ. Տնտեսական հարաբերություններ (այլ դասերին չպատկանող)
4.	Տրանսպորտ	Տնտեսական հարաբերություններ. Տրանսպորտ
5.	Գյուղատնտեսություն	Տնտեսական հարաբերություններ. Գյուղատնտեսություն, անտառային տնտեսություն, ձկնորսություն և որսորդություն (այդ թվում՝ ոռոգում)
6.	Զբոսաշրջություն	Տնտեսական հարաբերություններ. Այլ բնագավառներ. Զբոսաշրջություն
7.	Շրջակա միջավայրի պահպանություն	Շրջակա միջավայրի պաշտպանություն
8.	Անասնաբուժություն և բուսասանիտարիա	• Տնտեսական հարաբերություններ. Գյուղատնտեսություն, Տնտեսական

[9] Աղյուսակի կազմման համար հիմք են հանդիսացել «Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին» ՀՀ օրենքի 28.1-ին հոդվածի կարգավորումները:

		հարաբերություններ (այլ դասերին չպատկանող), • Շրջակա միջավայրի պաշտպանություն. Կենսաբազմազանության և բնության պաշտպանություն, Շրջակա միջավայրի պաշտպանություն (այլ դասերին չպատկանող)
9.	Կրթություն	Կրթություն և գիտություն
10.	Առողջապահություն	Առողջապահություն

4. ԸՍՏ ՀԻՄՆԱԿԱՆ ՈԼՈՐՏՆԵՐԻ ԵՎ ԸՍՏ ԿԼԻՄԱՅԱԿԱՆ ՎՏԱՆԳԻ ՏԵՍԱԿՆԵՐԻ՝ ՏԵՂԱԿԱՆ ԻՆՔՆԱԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՄԱՐՄԻՆՆԵՐԻ ՀԱՄԱՐ ՄԵԹՈԴԱԿԱՆ ՑՈՒՑՈՒՄՆԵՐ

Սույն բաժնում ներկայացված մեթոդական ցուցումները ըստ էության կարելի է դասակարգել երկու խմբի, առաջինը՝ ցուցումներ, որոնք ուղղված են համայնքի ղեկավարի կոնկրետ ոլորտում նախատեսված լիազորությունների իրականացմանը, երկրորդը՝ ցուցումներ, որոնք ուղղված են կլիմայի փոփոխության արդյունքում առաջացած կամ հնարավոր ռիսկերի նվազեցմանը և հարմարվողականությանը:

Առաջարկվում է համայնքների տեղական ինքնակառավարման մարմիններին, կլիմայական վտանգների նվազեցման և հարմարվողականության միջոցառումներ պլանավորելիս և իրականացնելիս, ղեկավարվել «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 12-րդ, 18-րդ, 35-52-րդ հոդվածներով սահմանված համայնքի պարտադիր խնդիրներով և համայնքի տեղական ինքնակառավարման մարմինների լիազորություններով:

Միաժամանակ, վերը մեջբերվածի համատեքստում, առաջարկվում է ընդունել ի գիտություն, որ ստորև ներկայացված խնդիրները, որոնց լուծման շրջանակում հնարավոր է դիտարկել հարմարվողականության միջոցառումները, համարվում են համայնքի պարտադիր խնդիրներ, որոնց լուծումը պետք է իրականացվի առաջնահերթորեն՝ համայնքի բյուջետային միջոցների հաշվին, դրանք են.

- համայնքի կայուն զարգացումը.

- նախադպրոցական կրթության և արտադպրոցական դաստիարակության կազմակերպումը.
- համայնքի բնակավայրերի կառուցապատումը, բարեկարգումը և կանաչապատումը, համայնքի աղբահանությունը և սանիտարական մաքրումը, կոմունալ տնտեսության աշխատանքների ապահովումը, ինչպես նաև համայնքային գերեզմանատների պահպանումը և գործունեության ապահովումը.
- համայնքի հասարակական տրանսպորտի աշխատանքի կազմակերպումը, համայնքային ճանապարհային ենթակառուցվածքների պահպանումը և շահագործումը.
- աղետների ռիսկերի նվազեցման և արտակարգ իրավիճակներում բնակչության պաշտպանության ու քաղաքացիական պաշտպանության միջոցառումների կազմակերպումը և իրականացումը.
- համայնքներում գյուղատնտեսության զարգացման խթանումը.
- համայնքում շրջակա միջավայրի պահպանությունը, ներառյալ՝ համայնքում էկոլոգիական կրթության և դաստիարակության խթանումը.
- համայնքներում զբոսաշրջության զարգացման խթանումը.
- համայնքում բնակչության առողջության պահպանման և բարելավման ծրագրերի իրականացումը, արդյունավետ և մատչելի առաջնային բժշկական սպասարկման պայմանների ստեղծումը:

Կլիմայի փոփոխության հարմարվողականությանը միտված միջոցառումները պլանավորելիս, առաջարկվում է համալիր մոտեցում ցուցաբերել համայնքի կազմում ընդգրկված բոլոր բնակավայրերի մասով:

Հաշվի առնելով այն հանգամանքը, որ բազմաբնակավայր համայնքների կազմում ընդգրկված բնակավայրերի գերակշիռ մասը ունեն ռելիեֆային մեծ տարբերություններ միմյանցից, հետևաբար՝ յուրաքանչյուր բնակավայրում կլիմայական ռիսկերը կարող են լինել տարբեր, պահանջելով տեղական իշխանությունների մասով առանձին մոտեցումներ և հասցեական վերաբերմունք:

Առաջարկվում է բազմաբնակավայր համայնքների ղեկավարներին, համայնքի կազմում ընդգրկված բնակավայրերի մասով կլիմայի փոփոխության

հարմարվողականությանը միտված միջոցառումների մասով պլանավորումներ իրականացնելիս, անմիջականորեն համագործակցել համապատասխան բնակավայրերի վարչական ղեկավարների հետ, մասնավորապես՝ հանձնարարել բոլոր բնակավայրերի վարչական ղեկավարներին գույքագրել իրենց բնակավայրերում առաջացած կամ հնարավոր կլիմայական ռիսկերը, դրանց հետևանքները և ներկայացնել դրանց լուծմանը միտված առաջարկություններ:

Բազմաբնակավայր համայնքների կազմում ընդգրկված բնակավայրերի վարչական ղեկավարներին, առաջարկվում է, բնակավայրում առկա կամ հնարավոր կլիմայական ռիսկերի և դրանց հետևանքների գույքագրումը իրականացնելիս, առաջնորդվել առավել առաջնահերթ լուծման կարիք ունեցող խնդիրները վեր հանելու և ներկայացնելու ճանապարհով, որոնց առաջնային լուծում չստանալու պարագայում հնարավոր է գրանցվեն մարդկանց կյանքի դեմ ուղղված հետևանքներ:

Համայնքի կազմում ընդգրկված բնակավայրերում կլիմայական ռիսկերի նվազեցման և հարմարվողականությանն ուղղված միջոցառումներ կազմակերպելու և իրականացնելու վերաբերյալ առաջարկություններով կարող են հանդես գալ բնակավայրերի վարչական ղեկավարները՝ պաշտոնապես, գրության տեսքով դրանք ներկայացնելով համայնքի ղեկավարին, կամ ավագանու հերթական նիստի օրակարգում հարց ներառելու նախաձեռնությամբ հանդես գալու միջոցով:

Կլիմայի փոփոխության, կլիմայական վտանգների և դրանց դիմակայելու վերաբերյալ բնակչության իրազեկվածության և գիտելիքի մակարդակը բարձրացնելու նպատակով, առաջարկվում է համայնքների տեղական ինքնակառավարման մարմիններին, համայնքապետարանների աշխատակազմերին և բնակավայրերի վարչական ղեկավարներին, խոցելի համարվող բնակավայրերի մասով կազմակերպել և իրականացնել իրազեկվածության բարձրացմանը միտված միջոցառումներ, հանդիպումներ և քննարկումներ:

Անհրաժեշտ է առանձնակի ուշադրություն դարձնել համայնքում (բնակավայրերում) գործող նախադպրոցական ուսումնական հաստատությունների շենքային պայմանների բարելավմանը, համայնքի բյուջետային միջոցները ուղղելով այդ հաստատությունների պահպանությանը և շահագործմանը: Կլիմայի փոփոխության, կլիմայական վտանգների արդյունքում վթարային կարգավիճակ ստացած

նախադպրոցական ուսումնական հաստատությունների հիմնանորոգման կամ բարելավումների նպատակով, առաջարկվում է օգտվել պետություն-համայնք համագործակցության հնարավորություններից, մասնավորապես՝ պետության կողմից տրամադրվող, կապիտալ շինարարությանն ուղղված սուբվենցիոն ծրագրերից:

Համայնքի տարածքում արտահիվանդանոցային ձևով բժշկական օգնության և սպասարկման պատշաճ իրականացումը ապահովելու նպատակով, առաջարկվում է համայնքների տեղական ինքնակառավարման մարմիններին, համայքում պլանավորվող կապիտալ շինարարական աշխատանքների գործընթացներում մշտապես դիտարկել գյուղական ամբուլատորիաների, առողջության առաջնային պահպանման կենտրոնների, առողջության կենտրոնների և բուժ.մանկաբարձական կետերի շենքային պայմանների բարելավման ծրագրերը՝ համայնքի տարեկան բյուջեով նախատեսելով համապատասխան ֆինանսական հատկացումներ:

Բոլոր այն համայնքների տեղական ինքնակառավարման մարմիններին, որոնց համայնքներում արտահիվանդանոցային ձևով բժշկական օգնությունը և սպասարկումը կազմակերպվում և իրականացվում է մարզային ենթակայության առողջության առաջնային պահպանման կենտրոնների, առողջության կենտրոնների և ամբուլատորիաների կողմից, առաջարկվում է մշտապես ուշադրության կենտրոնում պահել այդ հաստատությունների շենքային պայմանների վիճակը, և պարբերաբար այդ հարցերի լուծման կապակցությամբ պաշտոնական առաջարկություններ ներկայացնել ինչպես համապատասխան մարզպետին, այնպես էլ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների և առողջապահության նախարարություններին:

Համայնքում և դրա կազմում ընդգրկված բնակավայրերում գործող միջնակարգ և հիմնական դպրոցներ չեն համարվում համայնքային ենթակայության կազմակերպություններ (բացառությամբ Երևան համայնքի), սակայն դրանք համարվում են համայնքային նշանակության ամենակարևոր հաստատությունները, որտեղ իրենց կրթությունն են ստանում համայնքների դպրոցահասակ երեխաները:

Առաջարկվում է համայնքների ղեկավարներին, մշտական համագործակցություն ունենալ համայնքի տարածքում գործող հանրակրթական ուսումնական հաստատությունների հետ, բացահայտելով և վեր հանելով հանրակրթական դպրոցների շենքային պայմանների մասով առկա խնդիրները, կլիմայական վտանգների

ազդեցության պատճառով դպրոցներին հասցված վնասները և համապատասխանաբար դրանց լուծմանը միտված առաջարկություններով պաշտոնապես դիմել համապատասխան տարածքային կառավարման մարմիններին:

Բոլոր այն համայնքների ղեկավարներին, որոնց համայնքներում գործում են ավագ դպրոցներ, առաջարկվում է կլիմայական վտանգների ազդեցության պատճառով դպրոցներին հասցված վնասները մշտադիտարկել և անհրաժեշտության դեպքում՝ առաջացած վնասների վերացման, շենքային և ենթակառուցվածքային բարելավումներ իրականացնելու նպատակներից ելնելով, պաշտոնապես դիմել կրթության բնագավառի պետական լիազոր մարմնին, հաշվի առնելով այն հանգամանքը, որ ավագ դպրոցները համարվում են կրթության բնագավառի պետական լիազոր մարմնի ենթակայությամբ գործող հաստատություններ:

Այն համայնքներում, որոնց կազմում ընդգրկված բնակավայրերում կամ բնակավայրերից որևէ մեկու, առկա են սողանաքավտանգ գոտիներ, որոնց շուրջ տեղակայված են բնակելի տների, առաջարկվում է համայնքների ղեկավարներին՝ Հայաստանի Հանրապետության արտակարգ իրավիճակների նախարարության հետ համատեղ ուսումնասիրել սողանքները, իրականացնելով համապատասխան աշխատանքներ: Բոլոր այն դեպքերում, երբ սողանքների ուսումնասիրման արդյունքներով պայմանավորված, ի հայտ կգա մարդկանց իրենց տներից տարհանելու և վերաբնակեցնելու խիստ անհրաժեշտություն, ապա համայնքների ղեկավարներին առաջարկվում է օպերատիվ կարգով՝ համապատասխան գրությամբ դիմել համապատասխան մարզպետին, Կառավարություն կամ Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարություն:

Համայնքի կազմում ընդգրկված բնակավայրերում կամ բնակավայրում, որտեղ առկա է բնակավայր տանող ճանապարհին սպառնացող ակտիվ սողանքներ կամ նման ռիսկեր, առաջարկվում է համայնքի ղեկավարին, հրատապ կարգով՝ համայնքի բյուջեի պահուստային միջոցների հաշվին, նախաձեռնել շրջանցիկ կամ շրջանցող ճանապարհի կառուցման, նման ճանապարհ լինելու պարագայում՝ դրա նորոգման և գործարկման աշխատանքներ:

Առանձնակի ուշադրության են արժանի համայնքի վարչական սահմաններում գտնվող արոտավայրերում խմոցների ստեղծման և արոտավայրերի և դաշտամիջյան ճանապարհների վերանորոգման, ինչպես նաև ջրահեռացման աշխատանքները:

Հարկ է ընդունել ի գիտություն, որ համայնքի վարչական սահմաններում գտնվող թե՛ պետական և թե՛ համայնքային սեփականություն հանդիսացող արոտավայրերը և խոտհարքները՝ Հայաստանի Հանրապետության հողային օրենսդրության կարգավորումների շրջանակներում կառավարվում են համայնքի տեղական ինքնակառավարման մարմինների կողմից:

Առաջարկվում է համայնքների տեղական ինանակառավարման մարմիններին՝ վերանայել, իսկ այն համայնքներում որտեղ չկան ընդունված՝ մշակել և հաստատել հողերի կառավարման ամենամյա ծրագրերը, առանձնահատուկ ուշադրություն դարձնելով վարելահողերի, խոտհարքների և արոտավայրերի պահպանմանը և վերականգնմանն ուղղված աշխատանքների վրա, մշակելով արոտավայրերի օգտագործման և պահպանման միջոցառումների պլան՝ գերարածեցումը և էռոզացման պրոցեսները կանխելու նպատակով:

Համայնքների ղեկավարներին և ավագանու անդամներին, առաջարկվում է ընդունել ի գիտություն. Համայնքի սեփականություն հանդիսացող հողերի կառավարման (ամենամյա) ծրագիրը պետք է նպատակաուղղված լինի համայնքի սեփականություն հանդիսացող հողերի օգտագործման արդյունավետության բարձրացման և համայնքի հողային պաշարների կառավարման՝ տիրապետման, օգտագործման և տնօրինման բնագավառում համայնքային միասնական քաղաքականության սահմանման, համայնքի սոցիալ-տնտեսական զարգացման և համայնքի հնգամյա զարգացման ծրագրով սահմանված խնդիրների լուծմանը և այն պետք է հանդիսանա համայնքի հնգամյա զարգացման ծրագրի բաղկացուցիչ մասը:

Տեղական ինքնակառավարման մարմիններին՝ առաջարկվում է, հողերի կառավարման ամենամյա ծրագիրը մշակելիս, դրա իրականացման հիմքում դնել.

1) տվյալ տարվա ընթացքում հողերի նպատակային և ծրագրային կառավարման հետ կապված հարաբերությունները,
2) գույքագրման, հաշվառման, գնահատման, համայնքային սեփականության իրավունքի պետական գրանցման աշխատանքների կազմակերպումը,

3) հողերի պահպանվածության ապահովման ու կառավարման նկատմամբ վերահսկողության իրականացման հետ կապված հարաբերությունները,
4) համայնքի սոցիալ-տնտեսական զարգացման և բյուջետային քաղաքականության ուղղություններով սահմանված խնդիրները:

Համայնքի վարչական սահմաններում գտնվող պետական և համայնքային սեփականություն հանդիսացող արոտավայրերի և խոտհարքների պլանավորված կառավարման նպատակով՝ համայնքի ղեկավարի հանձնարարությամբ և համայնքապետարանի աշխատակազմի համապատասխան համայնքային պաշտոնատար անձի միջոցով անհրաժեշտ է իրականացնել արոտավայրերի և խոտհարքների կառավարմանն և պլանավորմանը միտված գործողություններ:

Գյուղատնտեսական նշանակության հողեր են համարվում գյուղատնտեսական կարիքների համար առանձնացված և գյուղատնտեսական գործունեություն ծավալելու նպատակով գյուղատնտեսական մշակաբույսերի մշակման, բազմամյա տնկարկների հիմնման, խոտհնձի, անասունների արածեցման, ինչպես նաև գյուղատնտեսական այլ նպատակների համար նախատեսված հողատեսքերը:

Առաջարկվում է համայնքների ղեկավարներին, ընդունել ի ղեկավարումն. Համայնքի սեփականություն հանդիսացող կամ համայնքի կառավարմանը հանձնված արոտավայրերը և խոտհարքները վարձակալությամբ տրամադրվում են բացառապես անասնապահությամբ զբաղվելու (արածեցման) և խոտհնձի պայմանով:

Վերը մեջբերվածի համատեքստում, առաջարկվում է համայնքների տեղական ինքնակառավարման մարմիններին ընդունել ի գիտություն հետևյալը. արգելվում է քաղաքացիներին և իրավաբանական անձանց սեփականության իրավունքով փոխանցել պետական և համայնքային սեփականություն հանդիսացող այն հողամասերը, որոնք՝ զբաղեցված են *ընդհանուր օգտագործման արոտավայրերով*, անասունների անցատեղերով, ճանապարհներով, բնական ջրհորներով, աղբյուրներով և տեղական ինքնակառավարման մարմինների որոշմամբ, այլ օբյեկտներով:

«Համայնքի վարչական սահմաններում գտնվող պետական և համայնքային սեփականություն հանդիսացող արոտավայրերի և խոտհարքների օգտագործման (կառավարման) պլանը» ընդունվում է համայնքի ղեկավարի համապատասխան որոշմամբ, առաջարկվում է այդ պլանը ընդունել մինչև արոտավայրերի օգտագործման

ժամանակաշրջանը, դրանում հաշվի են առնվում արածեցվող կենդանիների թվաքանակը և արոտավայրերի բերքատվությունը:

Արոտավայրերի և խոտհարքների օգտագործման (կառավարման) պլանում յուրաքանչյուր տարվա համար անհրաժեշտ է սահմանել արոտային շրջանի սկիզբը և ավարտը՝ ելնելով տվյալ տարվա կլիմայական պայմաններից[10]:

Արոտավայրերում կենդանիների մակատեղերը կառուցումը, արոտավայրից ջրելատեղերի հեռավորության սահմանումը, բնական խոտհարքներում խոտհնձի կատարումը անհրաժեշտ է իրականացնել Հայաստանի Հանրապետության կառավարության 2011 թվականի ապրիլի 14-ի «Հայաստանի Հանրապետությունում արոտավայրերի և խոտհարքների օգտագործման կարգը սահմանելու մասին» N 389-Ն որոշման 18-րդ, 19-րդ, 20-րդ, 21-րդ, 22-րդ և 23-րդ կետերով սահմանված չափորոշիչների համաձայն:

Կախված տվյալ համայնքում առկա կլիմայական վտանգներից, մասնավորապես՝ երաշտից, անհրաժեշտ է, որ համայնքի ղեկավարի կողմից՝ համապատասխան որոշմամբ հաստատվող արոտավայրերի և խոտհարքների օգտագործման (կառավարման) պլանը իր մեջ ներառի հետևյալը.

1) արոտավայրերի ընդհանուր մակերեսը և սեփականության ձևերը.

2) համայնքի (դրանում ընդգրկված բնակավայրերի) անասնագլխաքանակն ըստ տնտեսությունների և անասնակերի պահանջը.

3) անասնակերի պահանջի հաշվարկը.

4) համայնքի ֆիզիկաաշխարհագրական առանձնահատկությունները.

5) ըստ գոտիների արոտատեղամասերի ընթացիկ կառավարումը.

6) արոտատեղամասերի էկոլոգիական գնահատումը.

7) համայնքի արոտների և խոտհարքների բուսածածկն ու բերքատվության ցուցանիշները.

8) համայնքի կերահանդակներից և այլընտրանքային կերապահովման տարածքներից ստացվող չոր զանգվածի և արածեցման օրերի քանակը.

9) արոտատեղամասերի բաշխվածության գոտիականության քարտեզը.

---

[10] Տե՛ս Հայաստանի Հանրապետության կառավարության 2011 թվականի ապրիլի 14-ի «Հայաստանի Հանրապետությունում արոտավայրերի և խոտհարքների օգտագործման կարգը սահմանելու մասին» N 389-Ն որոշման 6-րդ կետ:

10) արոտատեղամասերի բաշխվածության քարտեզը.

11) արոտատեղամասերի արածեցման գրաֆիկը:

Առաջարկվում է համայնքների ղեկավարներին՝ արոտավայրերի և խոտհարքների օգտագործման և տնօրինման բնագավառներումիրականացնել վերահսկողություն.

⇒ հողերի պահպանմանն ուղղված միջոցառումների նկատմամբ.

⇒ հողերի դեգրադացման հետ կապված աշխատանքներ կատարելիս հողի բերրի շերտի հանման, պահպանման և օգտագործման նկատմամբ:

Այն բնակավայրերում, որտեղ առկա է բնակավայր տանող ճանապարհի, կամ միջհամայնքային ճանապարհներին քարաթափման վտանգներ, կամ արդեն իսկ առկա են քարաթափման ենթարկված տեղանքները, առաջարկվում է համայնքների ղեկավարներին, իրականացնել քարաթափման ենթարկված տեղանքի ուսումնասիրություններ, գույքագրում, որից հետո՝ նախաձեռնել դրանց հետևանքների վերացման, նման հնարավոր վտանգների առաջացումն կանխելուն միտված աշխատանքների պլանավորումներ և իրագործել դրանք:

Բոլոր այն համայնքների տեղական ինքնակառավարման մարմիններին, որոնց համայնքներում ջրամատակարարման ծառայությունը չի սպասարկվում օպերատորի կողմից, առաջարկվում է միջոցներ ձեռք առնել խմելու ջրի հասանելիության և անվտանգության ապահովման մասով: Խմելու ջրի սակավությամբ պայմանավորված, անցում կատարել ջրաչափային բացթողման համակարգերին, որպես համայնքի կողմից մատուցվող ծառայություն՝ սահմանել տեղական վճարներ:

Վերը մեջբերված մեթոդական ցուցումը, համայնքների ղեկավարները և ավագանին, իրավակիրառական պրակտիկայում կարող են իրագործել՝ ղեկավարվելով «Տեղական տուրքերի և վճարների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 14-րդ հոդվածի 1-ին մասի 10-րդ կետի պահանջներով[11]:

---

[11] «Տեղական տուրքերի և վճարների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 14-րդ հոդվածի 1-ին մասի 10-րդ կետի համաձայն՝ համայնքներում սահմանվում են տեղական վճարի հետևյալ դրույքաչափ. ջրմուղ-կոյուղու համար այն համայնքներում, որոնք ներառված չեն ջրմուղ-կոյուղու ծառայություններ մատուցող օպերատոր կազմակերպությունների սպասարկման տարածքներում, մասնավորապես ջրամատակարարման և ջրահեռացման վճարներ՝ համայնքի կողմից կամ համայնքի պատվերով մատուցված ծառայությունների դիմաց փոխհատուցման վճարի չափով, բացառությամբ «Հանրային ծառայությունները կարգավորող մարմնի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի համաձայն սահմանված հանրային ծառայությունների կարգավորվող ոլորտներում սակագների սահմանման դեպքերի:

Սաստիկ շոգի կլիմայական վտանգի առկայության պայմաններում, հատկանշական է ջրամատակարարման անխափան ծառայության մատուցումը համայնքի կազմում ընդգրկված բնակավայրերում:

Համայնքների տեղական ինքնակառավարման մարմիններին առաջարկվում է, ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 42-րդ հոդվածի իրավակարգավորումներով, համայնքի տարեկան բյուջեի շրջանակներում նախատեսել և նորոգել կամ հիմնանորոգել համայնքը ընդգրկող բնակավայրերի խմելու ջրի մատակարարման ցանցը, ինչպես նաև բնակչության առողջության պահպանման նկատառումներից ելնելով, առաջարկվում է միջոցներ ձեռք առնել տեղադրելու մաքրման կենսաբանական կամ քիմիական համակարգեր:

Առաջարկվում է համայնքների տեղական ինքնակառավարման մարմիններին, ծառայություններ մատուցող համայնքային ոչ առևտրային կազմակերպություններին, համայնքային հիմնարկներին և դրանց պաշտոնատար անձանց, առանձնակի ուշադրություն դարձնել համայնքի բնակչության կենսապահովման խնդիրները լուծելու նպատակով մատուցվող ծառայությունների մատուցման ինչպես որակին, այնպես էլ հասանելիությանը, ծառայությունների մատուցման շրջանակին:

Ելնելով վերոգրյալից, առաջարկվում է ջրամատակարարման, ջրահեռացման, ոռոգման, ջեռուցման, աղբահանության և սանիտարական մաքրման կազմակերպման, բազմաբնակարան շենքերի սպասարկման և օրենքով սահմանված դեպքերում այլ ծառայությունների իրականացման համար համայնքի ավագանու կողմից սահմանել համայնքի բյուջե մուտքագրվող վճարներ, որոնք հնարավորություն կընձեռեն հավաքագրել համայնքի համար լրացուցիչ սեփական եկամուտներ, ինչն իր հերթին հնարավորություն կընձեռի համայնքների տեղական ինքնակառավարման մարմիններին նախաձեռնելու և լուծելու այլ համայնքային նշանակության կարևոր խնդիրներ:

Եղանակային կանխատեսումներին և կլիմայի փոփոխության միտումներին համապատասխան անհրաժեշտություն է առաջանում վերանայել ջրային ռեսուրսների կառավարման համայնքային պլանները, ներառյալ ոռոգման ցանցը և խմելու ջրի սնող խողովակաշարերի և ներքին ցանցի ողջ համակարգը:

Այն համայնքներում, որտեղ բացակայում է ոռոգման ցանցը, առաջարկվում է խթանել ոռոգման ժամանակակից ջրախնայող տեխնոլոգիաների կիրառումը:

Այդ նպատակի համար, համայնքապետարանի աշխատակազմը, անհրաժեշտության դեպքում հրավիրյալ մասնագետների մասնակցությամբ, հարկավոր է որ գույքագրի այն տարածքները, որտեղ նման տեխնոլոգիաները կարող են լինել կիրառելի և արդյունավետ, որի արդյունքում պետք է առաջարկել մի քանի մոդելային լուծումներ բնակչությանը՝ ներկայացնելու և մասնագիտական խորհրդատվություն ապահովելու նպատակով:

Համայնքում զբոսաշրջության զարգացմանը միտված պարտադիր խնդրի իրագործման համատեքստում, առաջարկվում է համայնքների ղեկավարներին՝ իրենց լիազորությունների շրջանակում ընդունված որոշումներով խթանել զբոսաշրջային կառույցների և ենթակառուցվածքների ստեղծմանը, ինչպես նաև զբոսաշրջության զարգացմանը միտված միջոցառումների կազմակերպմանը և անցկացմանը: Համայնքի վարչական սահմաններում անվտանգ զբոսաշրջային երթուղիներ ունենալու նպատակից ելնելով, անհրաժեշտ է ապահովել զբոսաշրջային ճանապարհների անվտանգությունը՝ ստեղծելով բավարար պայմաններ, որոնք կբացառեն այդ ճանապարհահատվածներում հնարավոր փլուզումները և քարաթափումները:

Համայնքի վարչական սահմաններում գտնվող բոլոր այն զբոսաշրջային ճանապարհները, որոնք գտնվում են կամ անցնում են սողանքային գոտիներով, առաջարկվում է միջոցներ ձեռք առնել այլընտրանքային զբոսաշրջային ճանապարհների ստեղծման ուղղությամբ:

Համայնքների ղեկավարներին, առաջարկվում է ընդունել ի ղեկավարումն՝ համայնքի զբոսաշրջային ռեսուրսների (բնական, պատմամշակութային, մարդկային) գրանցամատյանը գույքագրելու և վարելու լիազորությունը[12]:

Կարկուտը, մթնոլորտային տեղումներ է, որոնք գալիս են տարվա տաք ժամանակաշրջանում 5 մմ մինչև 15 մմ (20 մմ-ից ավելիի դեպքում՝ խոշոր կարկուտ) տրամագծով խիտ սառցամասնիկների տեսքով, սովորաբար տեղատարափի հետ համատեղ ամպրոպի ժամանակ[13]:

---

[12] Տե՛ս «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 52-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետ:
[13] http://www.mes.am/hy/sparnacox-axetner/

Տեղում է տարվա տաք եղանակին (Հայաստանում՝ մարտ-հոկտեմբերին)՝ կույտաանձրևային ամպերից՝ օդի վերընթաց շարժումների պայմաններում՝ ամպրոպի, տեղատարափ անձրևների, երբեմն՝ փոթորկային քամու ուղեկցությամբ: Կարկտի դեմ պայքարի առավել տարածված եղանակը ամպերի գերսառած մասի մեջ հրթիռների կամ արկերի միջոցով լրացուցիչ խտացման կորիզների ներարկելն է, որը կատարվում է ռադիոտեղորոշման միջոցով:

Հայաստանի Հանրապետությունը առհասարակ գտնվում է կարկուտի կլիմայական վտանգի գոտում, ինչն մեծ ռիսկեր է առաջացնում գյուղատնտեսության, առավելապես՝ բուսաբուծության բնագավառում:

Գյուղատնտեսության ոլորտում բնական վտանգների թվում կարկուտն առավել ծանրն է: Կարկուտի առաջացումը և զարգացումը պայմանավորված է մինչև 30 մ/վրկ արագության հասնող ուժեղ վերընթաց հոսանքներով: Հայաստանի Հանրապետության տարածքում այն դիտվում է ճակատային և ներզանգվածային գործընթացների ժամանակ: Ներզանգվածային կարկտային գործընթացները դիտվում են գարնանը և ամռան առաջին կեսում, երբ մեծ են լինում կոնվեկտիվ հոսանքները և խոնավությունը: Ամենաակտիվ կարկտային գործընթացները դիտվում են, երբ երկրորդ կարգի ցուրտ ճակատը անցնում է հանրապետության տարածքով ցերեկվա երկրորդ կեսին, որին գումարվում են նաև կոնվեկտիվ հոսանքները:

ՀՀ տարածքի ռելիեֆային պայմանների բազմազանությունը պայմանավորում է կարկտի հաճախականության մեծ տարբերություններ: Կարկտահարության կլիմայական վտանգի նվազեցման և հարմարվողականության միջոցառումների իրականացման համար, առավել խոցելի են համարվում Արարատի, Արմավիրի, Շիրակի, Լոռու, Տավուշի, Արագածոտնի, Գեղարքունիքի և Կոտայքի մարզերի համայնքները և բնակավայրերը:

Համայնքների տեղական ինքնակառավարման մարմիններին առաջարկվում է, համայնքի վարչական սահմաններում, խթանել հակակարկտային ցանցերի կիրառումը տեխնոլոգիապես կիրառելի տարածքներում, միաժամանակ, աշխատանքներ տանել համայնքում գործունեություն իրականացնող տնտեսավարող սուբյեկտների և գյուղացիական տնտեսությունների հետ, հակակարկտային ցանցերի հնարավոր ներդրման գործիքակազմերը և հնարավորությունները ներկայացնելու միջոցով:

Անշուշտ, հարկ է արձանագրել, որ բնակլիմայական աղետների կանխարգելման ուղղությունները բազմազան են՝ կախված աղետի բնույթից, դրանց կանխարգելման տեխնոլոգիական և տնտեսական հնարավորություններից, ոլորտի և տարածաշրջանային առանձնահատկություններից:

Գյուղատնտեսության բնագավառում կլիմայի փոփոխության հարմարվողականության իմաստով, ինչպես և պետական կառավարման մարմինները, այնպես էլ համայնքների տեղական ինքնակառավարման մարմիններ ունեն որոշակի պարտավորություններ, որոնք ըստ էության մեկ նպատակ են հետապնդում, այն է՝ բնակլիմայական աղետներից վնասների կանխարգելում:

Համայնքներում բնակլիմայական աղետներից վնասների կանխարգելման և դրանց հետևանքների մեղմման նախընտրելի ուղղություններ կարող են դիտարկվել.

- ⇒ ոռոգման համակարգերի բարելավումը՝ կորուստների կրճատման, ջրախնայողական արդիական տեխնոլոգիաների ներդրման միջոցով.
- ⇒ կարկտապաշտպան միջոցների և տեխնոլոգիաների կիրառումը.
- ⇒ գյուղատնտեսական հողատեսքերի հակահեղեղային պաշտպանության, հողերի դեգրադացիայի, մասնավորապես՝ հողերի էռոզիայի և աղակալման, լանդշաֆտային հրդեհների կանխարգելման միջոցառումների իրականացումը.
- ⇒ բնակլիմայական աղետների ճշգրիտ կանխատեսումների, նախազգուշացման արդյունավետ միջոցների կիրառման միջոցով գյուղատնտեսությունում տնտեսավարողների իրազեկվածության մակարդակի բարձրացումը, արդյունքում՝ արագ արձագանքման պայմանների ստեղծումը[14]:

Առաջարկվում է համայնքների տեղական ինքնակառավարման մարմիններին, աշխատանքներ իրականացնել գյուղատնտեսությամբ զբաղվող բնակչության շրջանում կլիմայի փոփոխությանբ պայմանավորված վտանգների և գյուղատնտեսության վրա դրանց բացասական ազդեցությանը դիմակայելու միջոցների վերաբերյալ իմացության և իրազեկվածության բարձրացման նպատակով, մասնավորապես՝ այդ նպատակով

[14] Տե՛ս ՀՀ կառավարության 2017 թ. ապրիլի 13-ի նիստի N 15 արձանագրային որոշման հավելվածի 52-րդ կետ:

համայնքի բյուջետային միջոցների հաշվին, համայնքում մասնագիտական դասընթացներ կազմակերպելու մասով:

Գյուղատնտեսության ոլորտում, կլիմայի փոփոխության հարմարվողականության պլանավորումները համայքնային մակարդակում պետք է ուղեկցվեն պետություն-համայնք-մասնավոր համագործակցության շրջանակում, հաշվի առնելով այն հանգամանքը, որ գյուղատնտեսության բնագավառի պետական քաղաքականությունը իրականացվում է հանրապետական և տարածքային մակարդակներում, համայնքների տեղական ինքնակառավարման մարմինները պետք է սերտ համագործակցություն ծավալեն պատասխանատու մարմինների հետ, մասնավորապես՝ ՀՀ էկոնոմիկայի նախարարության և համապատասխան մարզպետարանի հետ:

Բոլոր այն համայնքների տեղական ինքնակառավարման մարմիններին, որոնց համայնքներում և դրանց կազմում ընդգրկված բնակավայրերում առկա է սելավավտանգներ, առաջարկվում է միջոցներ ձեռնարկել սելավատարերի վիճակի ամենամյա մոնիթորինգ իրականացնելու և մաքրման աշխատանքներ կատարելու մասով:

Քաղաքային բնակավայր ընդգրկող համայնքների համայնքապետարանների աշխատակազմերին և համայնքի կոմունալ ծառայությունը սպասարկող համայնքային բյուջետային հիմնարկներին ու կազմակերպություններին՝ առաջարկվում է հաշվառել և ուսումնասիրել բնակելի շենքերի հարևանությամբ գտնվող, շենքերին և բնակչությանը վտանգ ներկայացնող ծառերի վիճակը, դրա հիման վրա մշակել դրանցից անվտանգ ազատվելու տեխնիկական պայմանները և աշխատանքների պլանները, նաև աշխատանքների իրականացման առաջնահերթությունը ըստ ռիսկայնության աստիճանի:

Քաղաքային բնակավայր ընդգրկող համայնքների տեղական ինքնակառավարման մարմիններին, առաջարկվում է նախաձեռնել կամ շարունակել բազմաբնակարան շենքերի և հաստատությունների տանիքների նորոգման կամ հիմնանորոգման աշխատանքները, առաջնահերթությունը տալով ազբոշիֆերով պատված տանիքներին:

Համայնքի գույքի կառավարման տեսանկյունից, կարևոր է տեղական ինքնակառավարման մարմինների կողմից գույքի համալիր գույքագրման աշխատանքների իրականացումը և դրա արդյունքներով պայմանավորված համայնքային գույքի արդյունավետ տիրապետումը, օգտագործումն ու տնօրինումը: Բացի այդ կարևորության է արժանի համայնքի տարածքում գտնվող, ֆիզիկական կամ իրավաբանական անձանց սեփականության իրավունքով պատկանող, սակայն չօգտագործվող գույքի հետ կապված հիմնահարցերը:

Առաջարկվում է համայնքների տեղական ինքնակառավարման մարմիններին, համայնքապետարանի աշխատակազմի անշարժ գույքի կառավարման ստորաբաժանումներին կամ համապատասխան համայնքային պաշտոնատար անձանց, հաշվառել սեփականաշնորհված բայց չօգտագործվող կիսաքանդ/ոչ բարվոք վիճակում գտնվող շենքերն ու արտադրական շինությունները, ուսումնասիրել դրանց ֆիզիկական վիճակը և վթարայնության աստիճանը, մասնավորապես, բնական վտանգավոր երևույթների ազդեցության տեսանկյունից, ուսումնասիրել դրանց շահագործման կամ լիկվիդացիայի հեռանկարներն ու համապատասխան իրավական և վարչական հնարավոր գործիքակազմերը՝ հաշվի առնելով թե՛ սեփականատերերի իրավունքները և թե՛ համայնքին և բնակչությանը հասցվող վնասը:

5. ԲՆԱԿԱՎԱՅՐԵՐԻ ՄԱԿԱՐԴԱԿՈՒՄ ԱՂԵՏՆԵՐԻ ՌԻՍԿԵՐԻ ԵՎ ԴՐԱՆՑ ՀԵՏԵՎԱՆՔՈՎ ԱՌԱՋԱՑԱԾ ԽՈՑԵԼԻՈՒԹՅԱՆ ՆՎԱԶԵՑՄԱՆԸ ՄԻՏՎԱԾ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ՊԼԱՆԱՎՈՐՄԱՆ ՄԵԹՈԴԱԿԱՆ ՑՈՒՑՈՒՄՆԵՐ

Աղետների ռիսկի կառավարման համակարգի դերակատարներ են հանդիսանում պետական կառավարման մարմինները, տարածքային կառավարման պետական մարմինները, տեղական ինքնակառավարման մարմինները, հասարակական և մասնավոր կազմակերպությունները:

Համայնքների տեղական ինքնակառավարման մարմինները, հիմք ընդունելով տեղական ինքնակառավարման և քաղաքացիական պաշտպանության ոլորտները կարգավորող Հայաստանի Հանրապետության ներպետական օրենսդրությամբ սահմանված լիազորությունները, ինչպես նաև համայնքի պարտադիր խնդիրները, կարող են բնակավայրերի մակարդակում նախատեսել պլանավորումներ, որոնք

վերաբերելի կլինեն աղետների ռիսկերի և դրանց հետևանքով առաջացած խոցելիության նվազեցմանը միտված միջոցառումների կազմակերպմանը:

Առաջին հերթին անհրաժեշտ է կարևորել, կամ որպես առաջնահերթություն դիտարկել համայնքային մակարդակում խոցելիության գնահատումը, զուգահեռ նաև կարողությունների գնահատումը:

Խոցելիության և կարողությունների գնահատումը (այսուհետ՝ ԽԿԳ) տեղական մակարդակում ռիսկի կառավարման (այսուհետ՝ ՏՄՌԿ) բաղկացուցիչ մաս է և իրականացվում է համայնքի հետ համատեղ՝ նպաստելով աղետների ռիսկի հավաստագրման գործընթացին: ԽԿԳ-ի նպատակն է.

- ⇒ բացահայտել համայնքին սպառնացող, այդ թվում՝ կլիմայի փոփոխության հետ կապված, վտանգները, համայնքի խոցելիությունը, առկա կարողություններն ու վերջիններիս համադրությունից բխող աղետների ռիսկը,
- ⇒ ձևավորել համայնքի համար առաջնային, կենսական նշանակություն ունեցող, աղետների ռիսկի նվազեցմանն ուղղված միջոցառումների պլանավորման սկզբունքներն ու մեխանիզմները,
- ⇒ նպաստել համայնքի բնակչության իմացության, հմտությունների, գիտելիքների մակարդակի և համայնքում առկա ռեսուրսների բացահայտմանը, որոնք հնարավոր է ուղղել աղետների ռիսկի նվազեցմանը (այսուհետ՝ ԱՌՆ) նպաստող համայնքահեն միջոցառումների պլանավորմանն ու իրականացմանը:

ԽԿԳ-ն անհրաժեշտ է իրականացնել եռափուլ՝ երաշխավորելով նախապատրաստական, տվյալների հավաքագրման և վերլուծական աշխատանքների իրագործումը, որոնք ուղղված են համայնքին սպառնացող աղետների ռիսկի նվազեցման միջոցառումների պլանավորմանն ու իրականացմանը:

ԽԿԳ-ն համայնքային մասնակցային հետազոտական, վերլուծական գործընթաց է, որի տևողությունը 7-10 օր է, և որը բաղկացած է հետևյալ փուլերից.

- ✓ Նախապատրաստում.
- ✓ Տվյալների հավաքագրում.
- ✓ Վերլուծություն:

ԾԱՆՈԹՈՒԹՅՈՒՆ: Համայնքներում և դրանց կազմում ընդգրկված բնակավայրերում աղետների ռիսկերի կառավարման մեթոդական և կիրառական ցուցումները սահմանված են «Աղետների ռիսկերի կառավարումը տեղական մակարդակում» կիրառական ուղեցույցը հաստատելու մասին Հայաստանի Հանրապետության արտակարգ իրավիճակների նախարարի 04.10.2017 թվականի N 1106 հրամանով:

Առաջարկվում է Հայաստանի Հանրապետության համայնքների տեղական ինքնակառավարման մարմիններին, համայնքներում և դրանց կազմում ընդգրկված բնակավայրերում աղետների ռիսկերի կառավարման, աղետների ռիսկերի հետևանքով առաջացած խոցելիության հետևանքները վերացնելուն միտված գործողությունները և պլանավորումները իրականացնել, հիմք ընդունելով «Աղետների ռիսկերի կառավարումը տեղական մակարդակում» կիրառական ուղեցույցը[15]:

[15] Տե՛ս file:///C:/Users/Vahagn/Downloads/MES%20Minister%20Order_N1106_Oct%204.2017.pdf